ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
E-mail: hcav@hcav.am

Ե/2017- 06.02/ 68.

06.02.2017 թ.

ՀՀ Վայոց ձորի մարզպետ
Հարություն Սարգսյանին

Հարգելի պարոն մարզպետ

2014 թ. ապրիլի 17-ին ՀՀ կառավարության կողմից հաստատվել է Հայաստանի Հանրապետությունում հոգեկան առողջության պահպանման և բարելավման 2014-2019 թթ. ռազմավարությունը և ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկը: Նշված ցանկում ներառված մի շարք միջոցառումների պատասխանատու կամ համակատարող են ՀՀ մարզպետարանները:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածը ու «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն ռազմավարության կատարումն ապահովող հետևյալ միջոցառումների իրականացման մասին՝

6.4. Շուրջօրյա խնամքի կարիք չունեցող հիվանդների համար ծառայությունների զարգացման (հոգեբույժի/հոգեթերապևտի/կլինիկական հոգեբանի կաբինետներ) կարողությունների գնահատում և առաջարկությունների ներկայացում ՀՀ կառավարություն /2014-2019 թվականներ/

- 2015 թվականի հոկտեմբեր – 2016 թվականի դեկտեմբեր ժամանակահատվածում արդյո՞ք իրականացվել են աշխատանքներ նշված միջոցառման շրջանակներում, եթե այո, մասնավորապես ի՞նչ աշխատանքներ են իրականացվել և ի՞նչ արդյունքներ են գրանցվել

6.5. Հոգեբուժական դիսպանսերների ամբուլատոր ծառայությունների ապակենտրոնացման միջոցով Հայաստանի երեք քաղաքների (Երևան, Գյումրի, Վանաձոր) խոշոր պոլիկլինիկաներում կաբինետների ձևավորման նպատակով առաջարկությունների ներկայացում ՀՀ կառավարություն /2015-2016 թվականներ/

- Հոգեբուժական դիսպանսերների ամբուլատոր ծառայությունների ապակենտրոնացման միջոցով Հայաստանի երեք քաղաքների խոշոր պոլիկլինիկաներում կաբինետների ձևավորման նպատակով արդյո՞ք ներկայացվել են առաջարկություններ ՀՀ կառավարություն, մասնավորապես ի՞նչ առաջարկություններ են ներկայացվել և ի՞նչ արդյունքներ են գրանցվել *(խնդրում եմ տրամադրել առաջարկությունների փաթեթը)*

13 02 2017թ.

6.6. ՀՀ մարզերում ստացիոնար և ամբուլատոր ծառայություն իրականացնող հոգեկան առողջության կենտրոններ ստեղծելու կարողությունների գնահատում

(Այն մարզերում, որտեղ գործում են հոգեբուժական ստացիոնարներ, տվյալ մարզի տարածաշրջանների պոլիկլինիկաների հոգեբույժների կաբինետները, չփոխելով տեղակայումը, ներառել ստացիոնար ծառայություն իրականացնող կազմակերպության մեջ

Այն մարզերում, որտեղ չկան հոգեբուժական ստացիոնարներ, ձևավորել առանձին ստացիոնարներ կամ բաժանմունքներ մարզային հիվանդանոցների կազմում՝ նրանց միացնելով տվյալ մարզի տարածաշրջանների պոլիկլինիկաների հոգեբույժների կաբինետները՝ չփոխելով տեղակայումը) /2014-2015 թվականներ/

- Արդյո՞ք գնահատվել է Վայոց ձորի մարզում հոգեկան առողջության կենտրոններ ստեղծելու կարողությունները *(խնդրում եմ տրամադրել գնահատման արդյունքները)*
- Արդյո՞ք գնահատման արդյունքների հիման վրա ներկայացվել են առաջարկություններ, մասնավորապես ի՞նչ առաջարկություններ են ներկայացվել, ե՞րբ և ի՞նչ արդյունքներ են գրանցվել *(խնդրում եմ տրամադրել առաջարկությունների փաթեթը)*
- Արդյո՞ք ձևավորվել է առանձին ստացիոնար կամ բաժանմունք մարզային հիվանդանոցի կազմում, եթե այո, մասնավորապես ո՞ր հիվանդանոցի կազմում է ձևավորվել ստացիոնար կամ բաժանմունք, ե՞րբ, արդյո՞ք մարզի տարածաշրջանների պոլիկլինիկաների հոգեբույժների կաբինետները՝ չփոխելով տեղակայումը, միացվել են տվյալ ստացիոնարին կամ բաժանմունքին

6.8. Երեխաների և դեռահասների հոգեբուժական բաժանմունքների ձևավորման կարողությունների գնահատում և առաջարկությունների ներկայացում ՀՀ կառավարություն /2014-2016 թվականներ/

- Արդյո՞ք գնահատվել են երեխաների և դեռահասների հոգեբուժական բաժանմունքների ձևավորման կարողությունները
- Արդյո՞ք ՀՀ կառավարություն ներկայացվել են առաջարկություններ, մասնավորապես ի՞նչ առաջարկություններ են ներկայացվել և ի՞նչ արդյունքներ են գրանցվել
  (խնդրում եմ տրամադրել գնահատման արդյունքները և առաջարկությունների փաթեթը)

7.1. Փորձնական ծրագրի իրականացման շրջանակում Հայաստանի Հանրապետության երկու համայնքում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար ստեղծել շուրջօրյա խնամքի տուն, որպես այլընտրանք Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատի /2014-2015 թվականներ/

- 2015 թվականի հոկտեմբեր – 2016 թվականի դեկտեմբեր ժամանակահատվածում արդյո՞ք աշխատանքներ են իրականացվել Վայոց ձորի մարզում շուրջօրյա խնամքի տուն ստեղծելու համար, մասնավորապես ի՞նչ աշխատանքներ են տարվել, ե՞րբ, ի՞նչ արդյունքներ են գրանցվել
  (եթե ստեղծվել է խնամքի տուն, խնդրում եմ տրամադրել այդ հաստատության գործունեությունը կարգավորող իրավական ակտերի պատճենները՝ կանոնադրություն, ընդունման և դուրսգրման կարգ, վարքագծի կանոններ և այլն)

7.3. Փորձնական ծրագրից հետո մոդելի վերամշակում և ՀՀ-ում ներդրման կարողությունների գնահատում և առաջարկությունների ներկայացում ՀՀ կառավարություն /2016 թվական/

- Արդյո՞ք վերամշակվել է մոդելը, որի հիման վրա իրականացվել է փորձնական ծրագիր

- Արդյո՞ք գնահատվել է մոդելի ներդրման կարողությունները
- Արդյո՞ք ՀՀ կառավարություն են ներկայացվել առաջարկություններ և ի՞նչ արդյունքներ է գրանցվել

  (առկայության դեպքում խնդրում եմ տրամադրել փորձնական ծրագիրը, վերջինիս հիման վրա վերամշակված մոդելը և ՀՀ կառավարություն ներկայացված առաջարկությունների փաթեթը):

Միաժամանակ խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն, թե ռազմավարության կատարումն ապահովող վերոնշյալ միջոցառումների իրականացման համար 2014-2016 թվականների ընթացքում որքա՞ն ֆինանսական միջոցներ են ծախսվել, ի՞նչ աղբյուրներից (խնդրում եմ տեղեկատվությունը տրամադրել ըստ առանձին միջոցառումների, տարիների և ֆինանսավորման աղբյուրների):

Խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն նաև այն մասին, թե արդյոք իրականացվել են այլ գործողություններ՝ ուղղված ռազմավարության իրականացմանը, եթե այո՝ որ միջոցառումների իրականացմանն են ուղղված և ինչ գործողություններ են իրականացվել:

Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5 օրյա ժամկետում: Ուստի, ելնելով վերը նշվածից, խնդրում եմ տեղեկատվություն ստանալու հարցմանս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝
կազմակերպության նախագահ Արթուր Սաքունց

Կատ.՝ Մ. Թեմուրյան
mtemuryan@hcav.am
հեռ.՝ 077342268